ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1959 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հ. Ա. Ավետիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՇԵՖԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

## (1930 թ. դեկտեմբեր—1932 թ. դեկտեմբեր)

*Ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյակի տարիներին Հայաստանի պղնձարդյունաբերության վերակառուցումն ու վերաստեղծումն ապրեց բուռն աճ։ Հնգամյակի տարիներին սկսվեց պղնձաձուլական և ֆլոտացիոն գործարանների կառուցումը, հիմնականում մեքենայացվեցին հանքային աշխատանքները և արտադրական պրոցեսները, լուծվեց բանվորական մնայուն կադրերի պրոբլեմը, կառուցվեց Ղափան-Մինջևան երկաթգիծը։ Հնգամյակի վերջին տարում՝ 1932 թ. հնգամյակի առաջին՝ 1828/29 տնտեսական տարվա համեմատությամբ արտադրվեց մոտ 2000 տոննայով ավելի պղինձ։ Այս նվաճումները ձեռք բերվեցին բանվոր դասակարգի հերոսական ջանքերով, Կոմունիստական պարտիայի ամենորյա հոգատարության շնորհիվ։*

*Պղնձարդյունաբերության վերակառուցման գործում ակտիվ մասնակցություն ցուցաբերեց Հայաստանի Լենինյան Կոմերիտմիությունը։*

*Ներկա հոդվածը նպատակ ունի գիտական շրջանառության մեջ գնել մի շարք փաստաթղթեր, որոնք վկայում են կոմերիտմիության և ռնսպուբլիկայի երիտասարդության աշխատանքային հերոսության և բարձր հայրենասիրության մասին։*

*Նյութերն ընդգրկում են պղնձարդյունաբերության բնագավառում կոմերիտմիության գործունեության 1930 թ. դեկտեմբերից մինչև 1932 թ. դեկտեմբեր ընկած ժամանակաշրջանը։ Փաստաթղթերից երևում է, որ չնայած մեծ բերված նվաճումներին, պղնձահանքերն ու գործարանները սիստեմատիկաբար թերակատարում էին հանքաքարի արտահանման և պղնձի ձուլման պլանները, ցածր էր աշխատանքի արտադրողականությունը, բոլոր հանքերը չէ, որ մեքենայացված էին, մեծ տեղ էր բռնում ձեռքի և տնայնագործական մեթոդներով կատարվող աշխատանքը չէր բավարարում բանվորական ուժը, զգացվում էր որակյալ բանվորների սուր պակաս, մեծ չափերի էին հասնում գործալքումները ու բանվորական ուժի հոսունությունը։*

*Նշելով այս բոլորը, Հայաստանի Կոմերիտմիության 7-րդ համագումարը (1930 թ. դեկտեմբեր), ՀԿ(բ)Պ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի առաջարկությամբ, վերցրեց ռնսպուբլիկայի պղնձարդյունաբերության շեֆությունը (փաստաթուղթ № 1)։ Այսպիսով, պղնձարդյունաբերության ճակատում առաջացած ճեղքվածքների դժվարին պայմաններում սկսվեց նոր էտապ պղնձարդյունաբերության վերակառուցման համար կոմերիտմիության մղած պայքարի պատմության մեջ, ծնվեց դեպի աշխատանքը կոմերիտականների և երիտասարդների ունեցած կոմունիստական վերաբերմունքի նոր ձևը՝ շեֆակալությունը, որը վերածվեց կոմերիտմիության աշխատանքի մշտական մեթոդի։ Բանվոր երիտասարդության ուժերը մոբիլիզացվեցին ՀԱՄԿ(բ)Ի Կենտկոմի և Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի պղնձարդյունաբերության վերակառուցմանը վերաբերող որոշումների անշեղորեն կենսագործման շուրջը։*

*ՀԼԿԵՄ Կենտկոմը նամակով դիմում է բոլոր քաղկոմներին և շրջկոմներին, որտեղ պարզաբանում է պղնձարդյունաբերության նկատմամբ շեֆական աշխատանքների խնդիրները (փաստաթուղթ № 2)։ Պայմանագիր կնքվեց Անդրպղինձ կոմբինատի վարչության հետ (փաս-*

---

[1] *1929/30 տնտեսական տարվա պլանը կատարված էր Այավերդում 93 տոկոսով, Ղափանում՝ 67 տոկոսով։ Հանքերում աշխատում էին պահանջվող թվից 24,4 տոկոսով պակաս բանվորներ։ Միայն Ղափանում 6 ամսվա ընթացքում գործալքումների թիվը հասել էր 4347 բանվորական օրվա։*

տաթուղթ № 3) և կոնկրետ առաջադրանքներ տրվեց շրջանային կոմերիտական կազմակերպություններին՝ 780 կոմերիտականներ պղնձարդյունաբերության ճակատը մշտական աշխատանքի ուղարկելու համար (փաստաթուղթ № 4)։

Պղնձարդյունաբերության նկատմամբ ստանձնած շեֆական պարտականությունների կատարումը և երկրին ավելի շատ պղինձ տալու համար մղվող պայքարը համարելով իրենց գլխավոր խնդիրներից մեկը, Հայաստանի կոմերիտական կազմակերպությունները առաջին հնգամյակի տարիներին մոբիլիզացնում են իրենց ուժերը, սթափեցնում հետ մնացող օղակների աշխատանքը, պայքար մղում պղնձահանքերում և գործարաններում աշխատող բանվոր երիտասարդության կուլտուրական և կենցաղային պայմանների բարելավման, հանքահորերի և գործարանների արտադրողականության բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար (փաստաթղթեր №№ 5, 8)։

Լայնորեն ծավալվում են աշխատանքի սոցիալիստական ձևերը սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը։ Կազմակերպվում են կոմերիտական հարվածային բրիգադներ, արտելներ, հանքահորեր ու հանքախորշեր, պղնձաձուլական վառարաններ։ Կոմերիտականները զգևորվում էին ձեռք բերած նվաճումներով, մտահոգվում ժամանակավոր դժվարություններով ու անհաջողություններով, կազմակերպում էին «գրոհներ» և «բրիգադներ» արդիֆինպլաններում առաջացած ճեղքվածքները և աշխատանքի առաջընթացը արգելակող խոչընդոտները վերացնելու համար (փաստաթղթեր №№ 7, 9)։

Կոմերիտական կազմակերպությունները ուժգին պայքար տարան ֆարգործուսների միջոցով բանվորական որակյալ ուժ պատրաստելու, ֆարգործուսները պահպանելու և ամրապնդելու ուղղությամբ։ Երկու տարվա ընթացքում միայն Լավանի և Ալավերդու ֆարգործուսների միջոցով պատրաստվեցին 536 որակյալ մասնագետներ[2]։ Հարյուրավոր ամրացնողներ, մեխանիկական հորատողներ, հետախուզողներ պատրաստվեցին կարճաժամ դասընթացների միջոցով։

Պղնձարդյունաբերության համար կարևոր նշանակություն ուներ Ղափան-Մինջևան երկաթգծի կառուցումը, որի շեֆությունը վերցրեց Ղափանի կոմերիտական կազմակերպությունը։ Հաշվի առնելով երկաթգծի կոմերիտականների հերոսական աշխատանքը ՀՍՍՌ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն շինարարության կոմերիտական կազմակերպությանը պարգևատրեց ռեսպուբլիկայի բարձրագույն պարգևով՝ «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով[3]։

Հնգամյակի ավարտական տարվա վերջում ՀԿԿՄ Կենտկոմի հայտարարած դեկտեմբերյան գրոհին[4] ակտիվորեն մասնակցելու, երիտասարդության ուժերը պղնձարդյունաբերության ճակատում կենտրոնացնելու և արդիֆինպլանների կատարման գործում բարձր ցուցանիշներ ձեռք բերելու համար (փաստաթղթեր №№ 10, 11, 12) 1933 թ. հունվարի 9-ին ՀԿԿՄ Կենտկոմի բյուրոն Ալավերդու և Ղափանի կոմերիտական կազմակերպություններին պարգևատրեց Կենտկոմի գովասանագրով (փաստաթուղթ № 13) և նամակով դիմեց պղնձարդյունաբերության ճակատում աշխատող կոմերիտականներին էլ ավելի կրկնապատկել ուժերը, երկրորդ հնգամյակի պլանները կատարելու բարձր ցուցանիշներով (փաստաթուղթ № 14)։

Պղնձարդյունաբերության ճակատում կոմերիտմիության շեֆական աշխատանքների կատարումն ընթանում էր պարտիական կազմակերպությունների ամենօրյա ղեկավարության ներքո։ ՀԱՄԿ(բ)Պ Անդրերկրամը և ՀԿ(բ)Պ Կենտկոմը մեծ ուշադրություն էին հատկացնում կոմերիտմիության միջոցով նոր բանվորական կադրերի պատրաստման, նրանց կոմունիստական դաստիարակության հարցերին, կոմերիտմիությանը սովորեցնում էին ճիշտ օգտագործել ուժերը, ապրել և աշխատել — լենինարար (փաստաթուղթ № 6)[5]։

Փաստաթղթերը միաժամանակ խոսում են պղնձարդյունաբերության բնագավառում առաջացած ժամանակավոր դժվարությունների, առանձին օղակներում կոմերիտմիության շեֆական աշխատանքների մեջ եղած թերությունների մասին։

---

[2] ՄԼԻ հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 48, գ. 666 թ., 66։

[3] «Պայքար պղնձի համար», օրգան ՀԿ(բ)Կ Ղափանի շրջկոմի, շրջգործկոմի և Արմբյուրոյի, 1932 նոյեմբերի 15, № 50 (ՀՍՌՀ Կենտգործկոմի որոշումը)։

[4] ՄԼԻ հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 48, գ. 492, թ. 56։

[5] ա) «Խորհրդային Հայաստան», 1931, № 108 (ՀԱՄԿ(բ)Պ Անդրերկրամի 1931 թ. մայիսի 7-ի որոշումը՝ Անդրպղինձ կոմբինատի աշխատանքների մասին)։

բ) ՄԼԻ հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 48գ, 461 (ՀԿ(բ)Կ Կենտկոմի մայիսի 21-ի որոշումը, «Անդրպղինձ կոմբինատի արդ. ֆին. պլանի կատարման ընթացքի մասին»)։

Հրապարակվող բոլոր փաստաթղթերը պահվում են ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտիական արխիվում, 48 ֆոնդում։ Փաստաթղթերը բացի № 9-ից բերվում են ժամանակագրական կարգով։ Որոշ փաստաթղթեր ժամանակին տպագրվել են մամուլում։

Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Փաստաթուղթ
№ 1

## ՀԼԿԵՄ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԵՖՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ[6]

Պղնձարդյունաբերության պլանների թերակատարումն ի նկատի առնելով, համագումարը որոշում է վերցնել Հայաստանի պղնձարդյունաբերության շեֆությունը, և առաջարկում է Կենտկոմին և բոլոր ԼԿԵՄ կոմիտեներին դլխավին մոբիլիզացիայի ենթարկել ողջ կազմակերպությունը և առաջին հերթին պղնձի ֆրոնտում աշխատող կոմերիտականներին, արտամիութենական երիտասարդության ակտիվությունը մեր ծանր ինդուստրիայի համար հսկայական նշանակություն ունեցող պղնձի պլանների լրիվ կատարման և դերակատարման համար։

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆոնդ 48, գ. 280, թ. 11։

Փաստաթուղթ
№ 2

## ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՔԱՂԿՈՄՆԵՐԻՆ ԵՎ ՇՐՋԿՈՄՆԵՐԻՆ՝ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԵՖԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (1931 թ. հունվար)

Նպատակ ունենալով պղնձարդյունաբերական ֆրոնտում ամրացնել Հայաստանի կոմսոմոլի ողջ կազմակերպությունը և կազմակերպության ողջ օղակների գործնական աջակցության միջոցով տեղական կազմակերպությունների համար ստեղծելու լայն նախապայմաններ, պղնձարդյունահանման պլանների կատարելու և դերակատարելու համար, ԼԿԵՄ Հանրապետական 7-րդ համագումարի կողմից Հայաստանի կոմսոմոլը հայտարարված է պղնձի շեֆ։

Շեֆությունն ընթանալու է փոխադարձ կապի, կոմերիտական մասսայական կոնտրոլի ապահովման, բուրսիրային սգնության, բանվորական մնայուն ուժի մատակարարման և այլ ուղղություններում։

Ի կատարումն [ՀԼԿԵՄ] 7-րդ համագումարի դիրեկտիվների, Կենտկոմն առաջարկում է՝ ըջիջային ժողովներում, արտամիութենական երիտասարդության մասնակցությամբ, քննության առնել համագումարի որոշումները պղնձի շեֆության աշխատանքների մասին, այն հաշվով որպեսզի կոմերիտական լայն մասսաները տեղյակ լինեն պղնձի ֆրոնտում մեր կողմից կատարվելիք աշխատանքներին ու պարտավորություններին։ Կենդանի և դրավոր կապի, ինֆորմացիաների փոխանակման միջոցով իրագեկ դարձնել կազմակերպությանը ողջ պղնձի արդյունաբերության աշխատանքի ընթացքի, արդֆինպլանների կատարման արդյունքների և թերակատարման պատճառների մասին։ Պարբերաբար կոմիտեի բյուրոներում լսել պղնձարդյունաբերական (Ալավերդի, Ղափան) կոմսոմոլի ինֆորմացիան իրենց տնտեսական ֆրոնտի աշխատանքների մասին, ցույց տալով վերջիններիս գործնական աջակցություն դժվարագույն խնդիրները լուծելու։

Կնքել սոցմրցման պայմանագրեր պղնձարդյունաբերության կազմակերպության, ինչպես առանձին ըջիջների, նույնպես և շրջանային կոմիտեների հետ, պահանջելով, որ վերջինս ավելի

[6] ՀԼԿԵՄ 7-րդ համագումարը տեղի է ունեցել 1930 թ. դեկտեմբերի 20—26-ը Երևանում։

լայն ծավալեն սոցմրցումն ու հարվածայնությունը, կենսագործեն աշխատանքի սոցիալիստական բարձր ձևեր, բարձրացնեն աշխգիսցիպլինան, ծավալեն բանվորների և առաջին հերթին կոմերիտականների ինքնակոնտրակտացիան, իրենց պղինձ արդյունաբերության ամրացնելու տեսակետից, վերացնեն պրոգուլները, կանխեն կեղծ հարվածայնությունը և այլն։ Ընդ որում պահանջել, որպեսզի այդ կազմակերպությունների աշխատանքի հիմքում դրված լինի պղնձի արդյունահանման, ինքնարժեքի իջեցման և արտադրանքի որակի բարձրացման խնդիրը։ Հատուկ բրիգադների միջոցով կոմերիտական լայն կոնտրոլի ենթարկել սոցմրցման պայմանագրերի կիրառման խնդիրը։

Գլխավոր ուշադրությունը պիտի դարձնել բանվորական ուժի մատակարարման խնդրին, վերցնելով պղնձարդյունաբերությունը հասարակական բուքսիրների։ Լավագույն կոմերիտականներից և արտամիութենական երիտասարդության ուժերով կազմակերպել բուքսիրային բրիգադներ, ուղարկելով այդպիսիններին պղնձարդյունաբերություն, աշխատելու երկարատև կամ կարճատև (բայց ոչ պակաս մեկ ամսից)։ Ուղարկված բուքսիրները իրենց գործնական հարվածային աշխատանքներով պիտի օրինակ ծառայեն տեղի աշխատողներին։

Գյուղական կազմակերպությունները պիտի աջակցեն տեղերում գտնվող բանվորական ազատ ձեռքերի արտահոսին, դեպի պղնձարդյունաբերությունը, ուղարկվող բոլոր բրիգադների համար նախօրոք համաձայնության գալ կոմբինատի վարչության և ԼԿԵՄ շրջկոմի հետ։

Նպատակ ունենալով պայքարել բանվորական ուժի հոսունության դեմ, պղնձարդյունաբերությունն ապահովել մնայուն կադրերով, Կենտկոմն անհրաժեշտ է գտնում մոբիլիզացիոն կարգով 400 բանվորական ձեռք ուղարկել պղնձարդյունաբերություն մշտական աշխատանքի։ Այդ թվից ձեր շրջանին հասնում է.... հոգի։ Առաջարկվում է այդ ընկերներին (կոմերիտական և ոչ կոմերիտական) առանձնացնել և կոմբինատի առաջին իսկ պահանջով ուղարկել նրանց տրամադրության տակ։

Պահանջի դեպքում պղնձի ֆաբգործուսներն ուղարկել լավագույն բանվորների, բատրակների, կոլխոզնիկների երեխաներին, ապահովելու համար ապագա կադրերը լավագույն աշխատողներով։ Պարբերաբար մամուլի էջերում լուսաբանել պղնձի շեֆության աշխատանքները և ձեր շեֆական պարտականությունների կատարման արդյունքները։

Կենտկոմի քարտուղար՝ (Բարսեղյան)
Մաս. տնտ. բաժ. վարիչ՝ (Ջահանգուլյան)

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ,
ֆոնդ 48, գործ 495, թ. 7:

*Փաստաթուղթ*
№ 3

### ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ԱՆԴՐՊՂԻՆՁ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (1931 թ. մարտի 26) ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԵՖԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈՆԿՐԵՏԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԼԿԵՄ 7-րդ համագումարի որոշմամբ Հայաստանի կոմսոմոլի կազմակերպությունը հայտարարված է պղնձի շեֆ, որի նպատակն է կազմակերպության ողջ ուժերի գործնական աջակցությամբ և օժանդակությամբ ստեղծել բոլոր հնարավորությունները պղնձարդյունաբերության հնգամյակի 3-րդ վճռական տարվա առաջադրանքները լրիվ կատարելու և գերակատարելու։

Ի կատարումն համագումարի որոշման, ՀԼԿԵՄ Կենտրոնական Կոմիտեն կազմակերպության անունից հանձն է առնում կատարելու.

1. Պղնձի ողջ արդյունաբերությունը վերցնել հասարակական բուքսիրի. բուքսիրային օգնության կարգով տրամադրել Ալավերդու պղնձահանքերին չորս հազար (4000) և Ղափանին հազար հինգ հարյուր (1500) բանվորական օր։ Ընդ որում ա) ուղարկվող բուքսիրային բրիգադների համար նախօրոք համաձայնության գալ կոմբինատի հետ. բ) ծայրամասերից և հեռավոր վայրերից բուքսիրներն ուղարկել ոչ պակաս քան մեկ ամիս ժամկետով։

2. Ձեռնհաս ուժերից որպես մշտական աշխատողներ տրամադրել Ալավերդուն երեք հարյուր հիսուն (350) և Ղափանին երեք հարյուր (300) բանվորական ուժ, ոչ պակաս քան 18

տարեկան հասակը, ընդ որում բանվորական ուժը ուղարկել տեղերում բժշկական քննության ենթարկելուց հետո։

3. Պղնձարդյունաբերության ֆաբգործուսների յուրաքանչյուր նաբորի ինչպես և կոմերնատի կողմից ձեռնարկվող բանվորների որակավորման կուրսերին կադրերի մատակարարումը վերցնել կոմսոմոլի վրա, ապահովելով ֆաբգործուսները լավագույն բանվորների, բատրակների, կոլխոզնիկների երեխաներին [ընդունելը]։

4. Կոմերիտական տեխնիկ ինժեներներից մոբիլիզացիայի ենթարկել և տրամադրել Ղափանին երկու (2), Ալավերդուն երկու (2) հոգի մինչև 5-ամյակի վերջը։

5. 1930/1931 ուսումնական տարում Ալավերդում բաց անել կոմերիտական համալսարան տեխնիկական թեքումով, ապահովելով առաջին խմբի ընդունելությունը քառասուն (40) հոգու սահմաններում։

6. Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերության բանվորներից Կենտկոմի միջոցով ութ (8) կոմերիտականներ գործուղել կենտրոնական բարձրագույն ուսումնական հիմնարկները և վերջացնելուց հետո օգտագործել պղնձարդյունաբերության բնագավառում։

7. Ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը պղնձարդյունաբերության շրջանում, կոմսոմոլի նախաձեռնությամբ ապահովել բանվոր երիտասարդության և աշխատավորության հարյուր (100)%-ով ընդգրկումը աշխատանքի սոցիալիստական ձևերի մեջ։

8. Պղնձարդյունաբերության մեջ աշխատող բոլոր կոմերիտականներին 100%-ով հայտարարել սոցինքնակոնտրակտացիայի ենթարկված մինչև հնգամյակի վերջը՝ պղնձարդյունաբերության մեջ աշխատելու։ Կոմերիտականների նկատմամբ ինքնակոնտրակտացիայի և սոցմրցման մեջ ընդգրկելու աշխատանքները ավարտել ապրիլի 15-ին։

9. Պղնձարդյունաբերության բանվորության մեջ տարվելիք քաղ. դաստիարակչական, կուլտուրական աշխատանքների կազմակերպումը վերցնել կոմսոմոլի վրա, տրամադրելով նրան նյութական, բարոյական լայն օգնություն և օժանդակություն, մատակարարել գրականություն և ապահովել այդ ֆրոնտը անհրաժեշտ աշխատող կադրերով։

10. Կազմակերպության բոլոր օղակներում ծավալել պարզաբանական աշխատանքը պղնձարդյունաբերության նշանակության, դերի, ներկա դրության և կոմերիտմիության խնդիրների մասին, մոբիլիզացիայի ենթարկելու համար, կազմակերպության ողջ ուժերը պղնձարդյունաբերության առաջադրանքների լրիվ կատարելուն։

## ՊՂՆՁԻ ԿՈՄԲԻՆԱՏԸ ՀԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ

1. Անհրաժեշտ բանվորական ուժի պահանջը ներկայացնել Կենտրոնական Կոմիտե ոչ ուշ, քան 15 օր առաջ։

2. Ուղարկվող բանվորական ուժին ապահովել բնակարաններով։

3. Կատարել բանվորական ուժի ռացիոնալ նպատակահարմար օգտագործում, ժամանակին ապահովելով նրանց գործիքներով ու անհրաժեշտ տեխնիկական պիտույքներով։

4. Հեռավոր շրջաններից մեկնող բուքսիրային բրիգադների ճանապարհածախսը հոգալ կոմբինատի միջոցներից։

5. Կոմբինատը պարտավորվում է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները սոցմրցման ու հարվածայնության հաշվառման գործը կանոնավոր կազմակերպելու համար և այն հաշվով, որպեսզի հնարավորություն ստեղծվի յուրաքանչյուր բանվորին պարզ պատկերացում տալու իր հարվածային աշխատանքի արդյունքների մասին։

6. Ժամանակին կատարել ֆաբգործուսների ընդունելությունները, նախատեսված ու առաջարկված քանակով ապահովել համապատասխան շենքերի, տեխնիկական սարքավորման հայթայթումը։

7. Տրամադրել ինժեներա-տեխնիկական կադրեր կոմերիտ համալսարանի մասնագիտական ուսուցումը վարելու, ինչպես և ապահովել կոմերիտ համալսարանի կարիքների համար շենքերի ու տեխնիկական հարմարությունների գոյությունը։

8. Ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները զրույցների, դասախոսությունների, կարճատև կուրսերի միջոցով բանվորների տեխնիկական անգրագիտությունը վերացնելու համար, ինչպես և

---

1 Այսպես է տեքստում։

լրջորեն զբաղվել նոր եկող բանվորների որակավորման ու վերապատրաստման խնդիրներով-ապահովելով կադրերի պատրաստման առաջադրված պլանը։

9. Կոմբինատի հաշվին հատկացնել մեկ ազատ աշխատակից երիտասարդության մեջ աշխատելու։

10. Նորակառույց բնակարաններից 10%-ը տրամադրել երիտ. բանվորներին։

11. Ուղարկել կենտկոմ տասնօրյա տեղեկություններ պղնձի պլանների կատարման մասին։

ՀԿԵՄ կենտկոմի մաս. տնտ. բաժնի վարիչ՝ (Ջհանգուլյան)
Անդր. պղինձ կոմբինատի դիրեկտոր՝ (Ջալլաբյան)

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պատարխիվ.
ֆոնդ 48. գ. 497. թ. 57—59։

Փաստաթուղթ
№ 4

ՀԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ԱՆԴՐՊՂԻՆՁ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ (1931 թիվ մարտ)

1. Բոլոր ՀԿԵՄ ռայկոմներին՝ անմիջապես ձեռնարկել կազմակերպության բոլոր օղակներում պղնձի շնչության վերաբերյալ Անդրպղինձ կոմբինատի հետ կնքված պայմանագրի բնդունման ու մասսայականացման աշխատանքին։

2. Լենինականի, Երևանի բաղկոմներին՝ բյուրոյի հերթական նիստերում լսել Ալավերդու ՀԿԵՄ շրջկոմի ինֆորմացիան պղնձարդյունաբերության դրության մասին, և ձեռք առնել կոնկրետ միջոցներ շրջկոմի աշխատանքներին օժանդակելու։

3. Երևանի և Լենինականի բաղկոմներին՝ մոբիլիզացիայի ենթարկել 10 լավագույն կոմերիտականներ և ուղարկել Անդրպղինձ կոմբինատի տրամադրության տակ, տնտեսական և կուլտուրական աշխատանքներում օգտագործելու։

4. Ալավերդու և Ղափանի շրջկոմներին՝ անմիջապես ձեռնարկել պայմանագրի «...» սոցմրցման ու ինքնակոնտրակցիայի վերաբերյալ կետի մշակմանը, բոլոր բջիջներում և արտամիութենական երիտասարդության շրջանում այն հաշվով, որպեսզի պայմանագրով նախատեսված ժամանակին այն է. 15/4 վերջացնել ամբողջապես այդ աշխատանքները։

5. Շրջկոմներին՝ լավագույն ձեռնհաս ուժերից մինչև ապրիլի 15-ը մոբիլիզացիայի ենթարկել և ուղարկել պղնձարդյունաբերության մշտական աշխատանքների, ստորև հիշված կարգով։

Ալավերդու պղնձահանքերին ուղարկվում են հետևյալ կազմակերպություններից.

1. Լենինական 100 հոգի
2. Աբարան 100 հոգի
3. Մոլլագոռչա 80 հոգի*
4. Ստեփանավան 100 հոգի

Ղափան ուղարկվում է հետևյալ կազմակերպություններից.

1. Սիսիան 100 հոգի
3. Մեղրի 100 հոգի
4. Ղափան 100 հոգի

Մոբիլիզացիայի աշխատանքների ամբողջ պատասխանատվություն դնել անձամբ շրջկոմի քարտուղարների վրա։

Հավաքել գրքեր, գրենական և այլ կուլտուրական պիտույքներ պղնձարդյունաբերության բանվորության կուլտ աշխատանքներին սպասարկելու։

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պատարխիվ.
ֆոնդ 48. գործ 491. թ. 51։

* Այժմ Մարալիկ. Ադինի շրջան։

Փաստաթուղթ
№ 5

## ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԱՆԴՐՊՂԻՆՁ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԴԻՐԵԿՑԻԱՅԻՆ ՊՂՆՁԻ ՃԱԿԱՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պղնձի ֆրոնտում կոմերիտական և երիտասարդ բանվորության հոսունության պատճառներից մեկը և հիմնականը դա նրանց (երիտ. բանվորների և կոմերիտականների) Տնտեսական, կենցաղային ու կուլտուրական պահանջների շրջավարարումն է, պլյուս սրան՝ սիստեմատիկ մասսայական բացատրական ու դաստիարակչական աշխատանքների և խրախուսիչ միջոցների բացակայություններ։

Սրանով բացատրվում է նաև մեր վերջին մոբիլիզացիայի ընթացքում մի շարք կոմերիտականների կողմից պղնձի ֆրոնտի նորից լքումը։

ՀԼԿԵՄ ԿԿ-ի կողմից շարունակվում է կոմերիտական մշտական բանուժի մոբիլիզացիա դեպի Ալավերդի և Ղափան։ Սակայն որպեսզի մոբիլիզացիայի ենթարկվածների և ընդհանրապես պղնձի արդյունաբերության մեջ աշխատող երիտասարդ բանվորության մեջ երբևիցե չստեղծվի արտադրությունից փախչելու տրամադրություն, պետք է, և ՀԼԿԵՄ Կենտկոմը պահանջում է, որ այդ երիտասարդ բանվորության համար առաջին հերթին ստեղծվի կուլտուր-կենցաղային տանելի պայմաններ։ Սրա համար անհրաժեշտ է՝

1) Ընտանիքավոր կոմերիտական և երիտասարդ բանվորներին ապահովել անհրաժեշտ բնակարաններով, իսկ ամուրիներին հանրակացարաններով։

2) Հանրակացարանները պետք է ապահովվեն կուլտ-սանիտարական բոլոր օբյեկտներով։ Հանրակացարաններին կից պետք է ունենալ՝

ա) հանգստի և խաղի սենյակ՝ համապատասխան սենյակային խաղերով և ռադիո սան. կուլտ. սենյակ, գրադարան-ընթերցարան՝ համապատասխան գրականությամբ, թերթ, ժուռնալներ, «շտապ օգնություն» փոքրիկ դեղատուն և այլն.

բ) բոլոր ննջարաններում ունենալ ռադիո. վենտիլյացիա, գրասեղաններ, աթոռներ։

3) Հանրակացարաններում ապրողներին և մոբիլիզացիոն կարգով պղնձի ֆրոնտը մշտական աշխատանքի գնացողներին հատկացնել մատրասներ, սավան, սորիչ և բարձի երես։ Հանրակացարաններում պահպանել խիստ սանիտարական մարրություն և հսկողություն։ Հանրակացարաններում ունենալ նաև հատուկ ջրի ամաններ, բաժակներ ու լվացարաններ և կանոնավոր լուսավորություն։

4) Ալավերդում և Ղափանում կառուցել հատուկ ֆիզկուլտ հրապարակ և դահլիճ, ապահովել համապատասխան ֆիզկուլտ գործիքներով. երիտբանվորության ֆիզ. դաստիարակության համար։

5) Ամեն տարի, տարվա բոլոր եղանակներին, հանգստի տներում տրված տեղերի[9] ... տոկոսը և սանատորիա-կուրորտներում.....տոկոսը հատկացնել երիտ. բանվորներին։

6) Անհատական կցումների միջոցով՝ որակյալ բանվորներին և վարպետներին, համապատասխան կարճատև կուրս-դասընթացների կազմակերպումով ամենակարճ ժամկետում պետք է ապահովել նոր աշխատանքի անցնողների որակավորումը։ Արտադրության մեջ նրանց պետք է ապահովել անհրաժեշտ գործիքներով։

7. Յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ սիստեմատիկաբար պետք է ստուգվի նոր աշխատանքի անցածների ու աշակերտների որակը, նրանց կատեգորիաների բարձրացման իմաստով։

8. Արտահագուստների (շոր և կոշիկ) մատակարարումը երիտ. բանվորներին՝ պետք է կատարվի սիստեմատիկաբար, լրիվ և ժամանակին։

9. Բոլոր նոր ընդունվածներին ընդգրկելով կոոպերատիվ ցանցում պետք է ապահովել նրանց լրիվ բանվորական մատակարարումը արտադրական բանվորների իրավունքներին հավասար։

10. Արտադրության մեջ կատարել կոմերիտական և երիտ. բանվորների ուժերի ու պայմանների անտիպ դասավորում, որ հնարավոր լինի ըստ սմենների ընդգրկելու նրանց դպրոցական ցանցում։

---

[9] Տերստում բաց է թողնված։

11. Մոբիլիզացիոն կարգով պղնձի ֆրոնտն ուղարկվող կոմերիտականներին ու երիտասարդներին անմիջապես պետք է բավարարել կոշիկով և շորով (իհարկե նրանց աշխատավարձի հաշվին, որը պետք է դուրս գալ մաս-մաս)։ Այնուհետև 3 ամիսը մեկ անգամ անխտիր, ամբողջ երիտ. բանվորությունը պետք է ապահովվի կոշիկով։

12. Որպես լավագույն խրախուսիչ միջոց անհրաժեշտ է պղնձի ֆրոնտում աշխատող բոլոր կոմերիտականներին, նաև երիտ. բանվորներին, տալ միատեսակ ֆորմա՝ ձախ թևին հատուկ նշանով «պայքար պղնձի համար» կամ «ավելի շատ պղինձ երկրին» մակագրությամբ։

13. Կոմբինատների (Ալավերդի, Ղափան) կողմից յուրաքանչյուր տարի պետք է առանձնացվի որոշ գումար երիտ. բանվորության կուլտ. սպասարկման կարիքների բավարարման համար (կինո, արտադրական էքսկուրսիաներ, զվարճալիքի և ինտերնացիոնալ երեկոներ, երեկույթ ներկայացումների կազմակերպում և այլն)։

14. Ալավերդում և Ղափանում կոմբինատի հաշվին առանձնացնել մեկ աշխատակից երիտ. բանվորության մեջ աշխատելու համար (այդ թեկնածությունը պետք է առաջադրի ՀԼԿԵՄ ԿԿ-ն, որովհետև գա հանդիսանալու է միաժամանակ ՀԼԿԵՄ ԿԿ-ի ներկայացուցիչը կոմբինատում)։

15. Նորակառույց բնակարաններից 20 տոկոսը հատկացնել երիտ. բանվորներին։

16. Կառուցել բարակներ, պահեստի հանրակացարաններ, բուքսիրային կարգով շրջաններից պղնձի ֆրոնտը աշխատանքի եկողներին տեղավորելու համար բուքսիրայիններին ապահովել սննդով և կարիքավորներին կոշիկով ու շորով (բուքսիրայինների հաշվին)։

17. Կատարել կոմերիտական շախտերի, զաբոյների ու արտելների և առանձին հարվածայինների հարվածայնության արդյունքների սիստեմատիկ հաշվառում և պլանների կատարման ու բացասական երևույթների մասին դեկադային տեղեկություններ սիստեմատիկ կերպով ուղարկել ՀԼԿԵՄ ԿԿ-ին և ԼԿԵՄ ռայկոմին։

18. Երիտ. բանվորության և ընդհանրապես բանվորության մեջ անցկացնել խրախուսիչ նորանոր միջոցներ (պարգևատրում, փոխանցիկ և մշտական դրոշ, կարմիր տախտակ, գովասանք և շնորհակալություն մամուլի միջոցով, փոխանցիկ ալբոմ, կատեգորիայի բարձրացում, հեռավոր էքսկուրսիա, հանգստի տուն և սանատորիայի ուղարկում, Լենինի շքանշանի արժանացնել, աշխատանքի հերոսի կոչում տալ և այլն)։

19. Մանեսում պահել ԼԿԵՄ կոլբյուրոյի ազատ քարտուղար կոմբինատի հաշվին։

ՀԼԿԵՄ Կենտկոմի Մաս. տնտ. բաժին

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ,
ֆոնդ 48, գործ 495, թ 78—79:

Փաստաթուղթ
№ 6

## Из Постановления Секретариата ЦК КП(б) Армении от 29 августа 1931 года

### «О МЕРАХ ПО ЛИКВИДАЦИИ ПРОРЫВОВ ПО МЕДНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ И ВЫПОЛНЕНИЯ ПРОГРАММЫ 6000 ТОНН МЕДИ»

В целях скорейшей ликвидации прорыва по медной промышленности и обеспечения выполнения промфинплана по меди, ЦК КП(б) А

ПОСТАНОВЛЯЕТ

г) В области подготовки кадров

1. Медкомбинатам с 10/IX организовать краткосрочные курсы по подготовке механических бурильщиков на 30 чел. в Алавердах и на 20 чел. в Кафане и десятников 30 чел. для Зангезура и 50 для Алавердов.

2. Довести число слушателей ФЗУ в осеннем наборе по Алаверды до 400 чел. и по Кафану до 200 чел. Закмедкомбинату в декадный срок обеспечить Кафанское ФЗУ необходимыми средствами.

3. НКТруда, НКПросу и ВСНХ обеспечить курсы и ФЗУ преподавательским составом по горному искусству, маркшейдерскому делу, электротехнике, металлургии и пр.

Медкомбинатам и МБИТ СПСА добиться максимального использования для учебной работы местных специалистов.

4. Медкомбинатам, СПСА и Зак. Краевому Управлению работников Цветных металлов усилить работу по производственно-технической пропаганде на основе решений ЦК ВКП(б) и ЗКК ВКП(б)...

### О партийно-массовой работе

4. ЦК ЛКСМ усилить работу по медной промышленности, обратив особое внимание на расстановку своих сил на производстве и ведя беспощадную борьбу с настроениями рвачества и дезертирства с трудового фронта в рядах комсомола.

5. ЦК ЛКСМ к 20/IX мобилизовать 600 комсомольцев для участия в ликвидации прорыва по медной промышленности, направив их на работу в шахтах (350 по Алавердам и 250 по Кафану).

Поручить тт. Барсегяну, Сарьяну и Майскому к 10/IX с. г. разработать план организации и проведения мобилизации.

Дирекциям медкомбинатов обеспечить необходимые условия для максимально-эффективного использования комсомольцев и их бытового обслуживания.

**Партархив Армянского филиала ИМЛ, ф. 48, д. 360, лл. 108—117.**

*Փաստաթուղթ*
*№ 7*

### *ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ 4-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻՆ (1932 թ. փետրվար) ԿԵՆՏԿՈՄԻ ՏՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ*

*Կոմսոմոլը պղնձի շեֆությունը վերցնելուց հետո, հատկապես վերջին շրջանում՝ երևսով դարձավ դեպի պղնձի պլանների կատարման գործը։ Պղնձի համար կոմսոմոլի պայքարը ուժեղացավ մանավանդ վերջին 6-ամսում։ Ալավերդու կոմսոմոլի շրջկոմի նախաձեռնությամբ վերջին 5 ամսում (հուլիս-նոյեմբեր) ԼԿԵՄ շրջանային կազմակերպությունը բուքսիրային կարգով հանքերին տվել է 45,000 բանվորական օր։*

*Շեֆությունը վերացնելուց առաջ ամբողջ [19]30 թ. ընթացքում Շամլուղի կոմսոմոլը շաբաթօրյակի կարգով հանքերին տվել է 1300 բանվորական օր, իսկ [19]31 թ. հունվարից մինչև նոյեմբերի վերջը կոմսոմոլը շաբաթօրյակի կարգով տվել է 5,000 բանվորական օր և մյուս ռայոնների կոմսոմոլն էլ տվել է 2,000 բանվորական օր, բացի նոյեմբերին կազմակերպված խառը շաբաթօրյակից (4,289 բանվորական օր), որին մասնակցել են կուսակցական, կոմերիտական և պրոֆմիութենական մասսաներ։*

*Մանեսում [19]31 թ. հունվարից մինչև նոյեմբերի վերջը կոմսոմոլը բուքսիրային կարգով աշխատել է 9,240 օր։ Նույն ժամանակամիջոցում Ալավերդին հանքերին տվել է 11,423 օր։*

*Բացի այս շաբաթօրյակներից Երևանի կազմակերպությունը 3-ամսով հանքերում աշխատելու ուղարկեց 470 ուսանող, որոնք Ալավերդում եղած ժամանակ, պղնձի պլանները կատարվեցին ու երբեմն էլ գերակատարվեցին. հանքահանումը 24 տոկոսից հասավ մինչև 80 տոկոսի և երբեմն 135 տոկոսի, բացի այդ, Հայաստանի մյուս ռայոններից մոբիլիզացիոն կարգով ուղարկվել են հարյուրավոր կոմերիտականներ, որոնք 2—3—4 ամիս աշխատել են շախտերում։*

*Ներկայումս 200 կոմերիտականներ մոբիլիզացիոն կարգով անցած են մշտական աշխատանքի։ 200-ից 170-ը Ալավերդու կազմակերպությունից։ ԼԿԵՄ մյուս կազմակերպությունները պետք է ուղարկեին 500 կոմերիտական մշտական աշխատանքի, սակայն ուղարկվածներից մեծ տոկոսը լքել է պղնձի ֆրոնտը։ Այժմ հանքերում Լենինականից կա 10 հոգի, Երևանից՝ 7 հոգի, Իջևանից՝ 5 հոգի։*

ՇԱՄԼՈՒՂ. Շամլուղի կոմսոմոլը կազմակերպել է 7 կոմերիտական տնտհաշվարկի բրիգադ և մի ալմագի ստանոկ։

Ալիև Ասկյարի, Միշելաձեյի[10] և Աբաս-Օղլի-Մահրլամի կոմերիտական արտելները պղնձի շեֆությունը վերցնելուց առաջ իրենց ամսվա պլանները կատարում էին 109—125 տոկոսով, իսկ 1931 թ. ընթացքում կոմերիտ[ական] արտելների պլանների կատարման տոկոսը համեմատաբար բարձրացել է։ Ալիև Ասկյարը միայն հոկտեմբերի 15-օրյակում իր ամսական պլանը կատարել է 100 տոկոսով։ Ջինջիաշվիլին Զաբարի (նախկին Միշելաձեյի արտելը) տնտհաշվարկի բրիգադը հոկտեմբերի պլանը կատարել է 173 տոկոսով, Աղվանյան Ներսեսի բրիգադը՝ 138 տոկոսով. նոյեմբերին Ալիև Ասկյարի բրիգադը պլանը կատարել է 179 տոկոսով. Ջինջիաշվիլին՝ 120 տոկոսով։ Մովսեսյան Դասպարի վագոնի արտելը հոկտեմբերի պլանը կատարել է 130 տոկոսով. նոյեմբերին՝ 136 տոկոսով։ Ջինջիաշվիլու տնտհաշվարկի բրիգադը նոյեմբերին տնտեսել է՝ կարբիտից, անտառանյութից, գործիքների փչացումից և այլն՝ 487 ռուբլի։ Կոմսոմոլի նախաձեռնությամբ տնտհաշվարկի կիրառման, սոցմրցման և հարվածայնության լայն ծավալման հետևանքով Շամլուղում բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը։ [19]30 թ. 350 բանվոր արտահանել են 24.000 տոննա հանքարար, իսկ [19]31 թ. 10 ամսում նույնքան բանվոր արտահանել են 22.569 տոննա։

Կոմերիտական հին բանվոր բրիգադիր Ալիև Ասկյարի բրիգադը միշտ էլ գերակատարում է իր պլանները, որովհետև նա տիրապետում է հանքերի տեխնիկային, աշխատանքը կազմակերպում է ռացիոնալ կերպով. նրա յոթ-հոգանոց բրիգադայի բոլոր անդամները իսկական հերոսական, հարվածային աշխատանք են տանում։ Նա իր բրիգադի աշխատանքը դասավորել է երեք հերթի։ Առաջին սմենան իր աշխատանքի մասին զեկուցում է 2-րդ սմենային։ Երբ ճեղքվածք է լինում, առաջին սմենայից 2-րդ սմենան աշխատում է վերացնել այն ճեղքվածքները, կամ պայքարում է առաջին սմենայից ավելի արտադրել։ Նույնպես 3-րդ սմենան։ Շատերը կարծում էին, որ Ալիև Ասկյարի պլանների այդքան գերակատարումը, պետք է բացատրել նրա գաբոյի լավ դրությամբ։

Վերջին շրջանում Ալիև Ասկյարի բրիգադը տեղափոխեցին ավելի վատ, ցեխոտ գաբոյներ, և ամեն տեղ էլ Ասկյարի բրիգադը գերակատարեց պլանները։

Տնտհաշվարկին անցնելուց հետո բանվորների միջին աշխատավարձը 2—50 կ. բարձրացել է 3—89 կոպ. օրեկան։

Կոմերիտական տնտհաշվարկի բրիգադները նվաճումներ ունեն նաև Ալավերդում և Մանեսում։ Պղնձի ֆրոնտի կոմսոմոլի աշխատանքի թույլ կողմն այն է, որ կոմսոմոլը չափազանց անբավարար է պայքարում հանքերի տեխնիկական թերությունների վերացման, հետախուզական աշխատանքների ուժեղացման. ռացիոնալիզացիայի ձեռնարկումների կիրառման, աշխատանքների լավագույն կազմակերպման, բանվորների ուժերի ռացիոնալ օգտագործման, ռեմոնտի ժամանակին կատարմանը հետևելու գործում։

Հանքերում համարյա բոլորովին չեն աշխատում կոմսոմոլի պլան օպերատիվ խմբակները։

Հաճախ ալմագի ստանոկների մասերի ռեմոնտը Երևանի մեխանիկական գործարանի կողմից ուշացնելու պատճառով, պլաններում առաջանում է ճեղքվածք, սակայն շախտերի բջիջները չեն մտածում մեխ. գործարանի կոմսոմոլի առաջ պահանջ դնել, որպեսզի նրանք կատարեն շեֆական պարտքը, ժամանակից առաջ, բուրսիրային կարգով, առաջին հերթին նորոգեն շախտերի մեքենաների մասերը։ Նրանք չեն առաջարկել, որպեսզի Երևանի մեխանիկական գործարանի ԼԿԵՄ բջիջը վերցնի ալմագի ստանոկների ռեմոնտի շեֆությունը։

Շախտերի կոմսոմոլը չի ճանաչում իր բոլոր կեղծ հարվածայիններին։ Այս ուղղությամբ կոմսոմոլը պետք է կատարի վճռական բեկում, խփի կեղծ հարվածայիններին և հարվածային լավագույն կոմերիտականների օրինակով վարակի ամբողջ կոմսոմոլը։

Կոմսոմոլը նույնպես Ասկյար Ալիևի աշխատանքի լավագույն փորձը պետք է տեղափոխի դյուս գաբոյները։

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պատտարխիվ.
ֆոնդ 48, №666.... p 58—61։

---

[10] Հայաստանի կոմերիտմիության VIII համագումարում Միշելաձեն ընտրվեց ՀԼԿԵՄ Կենտկոմի անդամ։

*Փաստաթուղթ*
*№ 8*

## ВЫПИСКА ИЗ ПРОТОКОЛА № 44, § 9

заседания Бюро ЦК ЛКСМ Армении от 3 мая 1932 г.

**9. О мобилизации комсомольцев на постоянную работу в Алавердских рудниках (тов. М. Хачатрян)**

9. Предложение Камарлинского райкома[11] о мобилизации 15 комс. на постоянную работу в подшефный Алавердский Медкомбинат принять.

а) Принять к сведению заявление секретаря Вагаршапатского[12] райкоммола о том, что под его ответственность к 15 мая будет мобилизовано 10 комсомольцев на работу в Алавердском комбинате.

б) Принять к сведению заявление секретаря Караклисского[13] райкоммола тов. Габриеляна о том, что к 10 мая будет мобилизовано и послано на работу в Шагали-Эйларские[14] рудники 5 комсомольцев.

в) Принять к сведению заявление секретаря Артикского райкоммола тов. Котояна о том, что к 15 мая будет мобилизовано 5 комс. на работу в Алавердском комбинате.

г) Принять к сведению заявление Степанаванского райкоммола о том, что к 15/V будет мобилизовано 15 комс. на работу в Алавердском комбинате.

д) Принять к сведению заявление секретаря Ленгоркома тов. Сейраняна о том, что к 15/V будет мобилизовано 10 комс. на работу в Алавердском комбинате.

е) Предложить Эргоркоммолу, под личную ответственность тов. Джангуляна, мобилизовать 15 комс. на работу в Алавердском комбинате.

ж) Предложить тов. Меликяну[15] 17/V телеграфно информировать ЦК о выполнении данного решения со стороны указанных организаций.

з) Предложить тов. Меликяну совместно с дирекцией комбината организовать встречу в Алавердах.

и) Всю ответственность за создание нормальных условий работы возложить на Алавердский райкоммол и директора комбината тов. Шестакова.

к) Предложить тов. Меликяну в пятидневный срок послать необходимые суммы денег в районы для проездных расходов мобилизуемых.

Секретарь ЦК ЛКСМ Армении БАРСЕГЯН

**Партархив Армянского филиала ИМЛ.**
**ф. 48, д. 573, л. 2.**

*Փաստաթուղթ*
*№ 9*

### ՀԿԵՄ 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ՝ ՊՂՆՁԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԵՖԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ[16]

*Համագումարում արձանագրում է, որ 7-րդ համագումարում Հայաստանի Պղնձարդյունաբերության շեֆությունը վերցնելուց հետո՝ ԼԿԵՄ կազմակերպությունները զգալի աշխատանք ծավալեցին պղնձարդյունաբերության պլանների կատարման ուղղությամբ՝ հանքերին տրամադրելով որոշ քանակությամբ մշտական կոմերիտական բանուժ, հաճախակի բուքսիրներ*

---

[11] Ныне Арташатский район.
[12] Ныне Эчмиадзинский район.
[13] Ныне Кировоканский район.
[14] Ныне Анкадзор.
[15] Секретарь Алавердского РК ЛКСМ Армении.
[16] *Համագումարը տեղի է ունեցել 1932 թ. մայիսի 29-ից հունիսի 5-ը Երևանում։*

ուղարկելով և այլ ձեռնարկումներով. սակայն համագումարն անհրաժեշտ է համարում նշել, որ մի շարք կոմիտեների կողմից շեֆական աշխատանքների անտեսումը պղնձի ֆրոնտում աշխատանքի սոցիալիստական ձևերի անբավարար ծավալումը, տեղի կոմերիտական կազմակերպությունների կոնտակտ աշխատանքի բացակայությունը՝ ադմինիստրացիա ինժեներական պերսոնալի հետ, պղնձարդյունաբերության տեխնիկայի տիրապետման և ստալինյան 6 ցուցմունքների[17] կենսագործման համար տարվող պայքարն ու երկրաբանական-հետախուզական աշխատանքներին չափազանց անբավարար ուշադրություն դարձնելը պատճառ է հանդիսանում մեր ծանր ինդուստրիայի համար հսկայական նշանակություն ունեցող պղնձարդյունաբերության պլանների թերակատարմանը։ Համագումարը որպես առաջիկայի մարտական խնդիր, ՀԼԿԵՄ բոլոր կազմակերպություններին պարտադրում է ամբողջովին վերջ տալ շեֆական աշխատանքներին ձևական մոտեցմանը, ամենակարճ ժամանակամիջոցում պղնձի ֆրոնտը մշտական աշխատանքի ուղարկել որոշված բանակությամբ լավագույն և կայուն կոմերիտականներ։ Անհրաժեշտ է կազմակերպության բոլոր օղակներում՝ առաջին հերթին Ալավերդու և Ղափանի կազմակերպություններում լայն մասսայականացնել Համկ(բ)կ Կենտկոմի Հոկտեմբերի 31-ի որոշումը[18] ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշումը[19] պղնձարդյունաբերության ռեկոնստրուկցիայի մասին և ապահովել կոմերիտական օգնությունն ու կոնտրոլը Ալավերդու, Ղափանի պղնձահանքերի վերասարքավորման ու հիմնական վերակառուցման աշխատանքներում։ Համագումարը պարտավորեցնում է մանավանդ պղնձի ֆրոնտի կոմսոմոլին, առանձնահատուկ ուշադրություն դարձնել ու ակտիվ մասնակցել պղնձի նոր պաշարներ ու հանքավայրեր հայտնաբերելու համար տարվող երկրաբանական հետախուզական աշխատանքներին։

Այս տարի 5000 տոննա պղնձի արտադրությունը պետք է լինի Ալավերդու, Ղափանի և ողջ ՀԿԵՄ կազմակերպությունների պատվի գործը։

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պատասխան,
ֆոնդ 48, գործ 570, թ 5։

*Փաստաթուղթ*
*№ 10*

## ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՃԵՂՔՎԱԾՔՆԵՐԻ ՓԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԳՐՈՀԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### Ղ Ա Փ Ա Ն

Սիստեմատիկ կերպով բոլոր բջիջներից բուրսիր են կազմակերպել պղնձի պլանների կատարման համար։ Ղափանի կազմակերպության լոզունգն է եղել, դեկտեմբերին տանք 3600 տոննա հանքաքար։ Այդ լոզունգի կենսագործման համար Ղափանի ՀԿԵՄ շրջկոմը մոբիլիզացիայի է ենթարկել 20 կոմերիտականների մեկ ամսով և 35 կոմերիտականների 15 օրով լենինյան գրուպայում աշխատելու համար։ Գրոհի ընթացքում հանքերին ֆարգործուսը տվել է 240 բանվորական ձեռք, Բանկոոպի բջիջը՝ 200 բանվորական ձեռք, գործարանի կոլբյուրոն, 300 բանվորական ձեռք։ Աչքի ընկնող գործ է կատարել 7-ամյակի (դպրոցի) բջիջը և շրջկոմի հատուկ բրիգադը։ Նույնիսկ հանքերից 45 կիլոմետր հեռավորության վրա գտնված գյուղերը բուրսիր են կազմակերպել գրոհի ընթացքում։ Գրոհին ակտիվ մասնակցություն է ցույց տվել նաև պիոներ կազմակերպությունը։

Գրոհի ընթացքում շրջկոմը լույս է ընծայել հատուկ պատի թերթ։ Հանքաքարի համար դեկտեմբերի տասնօրյակի պլանը կատարված է 170 տոկոսով, 2-րդ տասնօրյակինը՝ 180 տոկո-

---

[17] Նկատի է առնվում Ի. Վ. Ստալինի ճառը անտեսավարների համամիութենական խորհրդակցությունում (1931 թ. հունիս)։

[18] 1923 թ. հոկտեմբերի 31-ին Համկ(բ)Պ Կենտկոմը ընդունեց որոշում Համկ(բ)Պ Անդրերկրկոմի, պարտիայի Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կենտկոմների զեկուցումների առթիվ, որտեղ մեծ ուշադրություն էր դարձվում նաև Հայաստանի պղնձարդյունաբերության վերակառուցման և վերասարքավորման հարցերին։

[19] ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն 1931 թ. նոյեմբերի 22-ին մշակեց միջոցառումներ Համկ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը կենսագործելու ուղղությամբ (տես «Գործի վերածենք Լենինյան շտաբի հոկտեմբեր 31-ի որոշումը» Երևան, 1932)։

սով։ Իսկ ամբողջ ամսվանը դեռ դեկտեմբերի 27-ին կատարվել է 101 տոկոսով։ Պղնձի ձուլումը առաջին և երկրորդ տասնօրյակում կատարված է 113 տոկոսով։

№ 6 կոմերիտական հանքը անընդհատ բարձրացնում է պլանների կատարման տոկոսները։ Դեկտեմբերի մեկին այդ հանքը տվել է 32 տոննա պղնձաքար, 2-ին՝ 42 տոննա, 3-ին՝ 62 տոննա, 4-ին՝ 77 տոննա, 5-ին՝ 100 տոննա և 6-ին՝ 112 տոննա, դեկտեմբերի 1—9-ը հանքերը ստացել են 2862 բուրսիրայիններ. յուրաքանչյուր կոմերիտական գրոհի ընթացքում 5-օր աշխատել է հանքերում։ Կոմսոմոլի նախաձեռնությամբ կազմակերպված են 4 տնտ. հաշվարկային բրիգադներ։ Լենինյան հանքերի կոմսոմոլի միջոցով հավաքված է 48 կիլո ամրացման մեխ և 240 կիլո մաքուր պղինձ։ 6-րդ հանքի կոմսոմոլիստներ՝ Ս. Սիմոնյանը, Ն. Առաքելյանը, Ն. Պապյանը և Ա. Բաղդասարյանը իրենց օրական պլանը կատարում են 200—250 տոկոսով։

Մոբիլիզացիոն կարգով շրջկոմը 25 կոմերիտականներ է ուղարկել հետախուզական-նախապատրաստական աշխատանքների ուժեղացման համար։ Կազմակերպված է 21 օրինակելի անտեսական հաշվարկային բրիգադներ։ Դեկտեմբերի 10-ից 45 մեծահասակ կոմսոմոլիստներ ուղարկվել են հանքերը բուրսիրի, կազմակերպված է էլեկտրոտեխնիկան ուսումնասիրող 3 խմբակ՝ 60 կոմերիտականներով։

Կոմսոմոլի 6-րդ հանքը իր հեղամյակը կատարել է դեկտեմբերի 25-ին, իսկ դեկտեմբեր ամսին տվել է 1135 տոննա, որը կազմում է պլանի 133,1 տոկոսը։ 1932 թ. պղնձարդյունաբերությանը տրված է 217 մշտական բանվոր, կազմակերպված է անընդհատ մասսայական շաբաթօրյակներ։ Շրջանի կազմակերպության 91 տոկոսը ընդգծված է սոցմրցման և հարվածայնության մեջ, իսկ արտադրության մեջ ընդգրկված է աշխատողների 100%-ը։

40 կոմերիտականներ ինքնակոնտրակտացիայի մեջ են մտել մինչև 2-րդ հեղամյակի վերջը արդյունաբերության մեջ աշխատելու։

Շրջկոմը գործկոմի և կոմբինատի կողմից ստացել է շնորհակալություն, երկու դրոշակ, 2500 ռուբլու գրականություն և 3500 ռուբլի դրամ։

## ԱԼԱՎԵՐԴԻ

Մանեսը — ձուլարանի համար կազմակերպված է 290 բանվորական օր շաբաթօրյակ, երկու անգամ առանձին շաբաթօրյակ, մասնակցությամբ 400 հոգու, հարվածային աշխատանքի շնորհիվ յուրաքանչյուր վառարանի 5 աշխատողի գործը կատարում են 4-ը, որի պատճառով տվել են 5 բանվորական ձեռքի խնայողություն այդ ճյուղում։ Մանեսի տրանսպորտի բջիջը 10 կոմերիտականների բուքսիր է ուղարկել Աղթալա 10 օր ժամանակով։ Բացված են 40 կարմիր անկյուններ, 5 նոր քաղխմբակներ, 5 ռազմական խմբակներ, ակտիվից և ուսուցիչներից 12 հոգի առանձնացվել են միայն— ագիտ. մասսայական աշխատանքների համար։

Մանեսի 154 կոմերիտականներից 143-ը հարվածայիններ են, 115-ը սոցմրցման մեջ են, 127-ը կոնտրակտացիայի[20]։

Շամլուղ.— կազմակերպված է երկու կոմերիտական բրիգադ 28-րդ հանքում Մախմուդով Ալեքսանդրի և յոթերորդ հանքում Վլադիմիր Մուխովի բրիգադավարությամբ։ Գրոհի ընթացքում հարվածայնությունը մեծ թափ է ստանում Շամլուղում։ Գրոհի սկզբում ունեինք 55 կոմերիտական հարվածայիններ, իսկ գրոհի ընթացքում 65 կոմերիտականներ։ Դեկտեմբեր ամսում կոմերիտական բրիգադները տալիս են հետևյալ ցուցանիշները. Մուխով Քրիստափորը—125 տոկոսով, Ալմազի Սկվաժինա 150 տոկոսով։ Վերացված են ճաշարանում հերթերը, 24-ին կազմակերպվել է մասսայական շաբաթօրյակ։

Լենինյան հանքը.— Կազմակերպվել է 3 նոր քաղխմբակ, երկու քաղ. օր բանվոր երիտասարդության մասնակցությամբ։ Հանքը մինչև 2-րդ գնդակը պլանը կատարել է 103 տոկոսով։

Սոցմրցումն հասցված է 97 տոկոսի։

ՍԼԻ Հայկական ֆիլիալի պատմարխիվ. ֆ. 48. գ. 492. թ. 116։

---

[20] Ալավերդու պղնձահանքերում և ձուլարանում աշխատում էին 895 կոմերիտականներ։

Փաստաթուղթ

№ 11

### ՄԻՆՉԵՎ 1932 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ը ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏՈՐԻ ՄԱՍԻՆ ՀԼԿԵՄ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՇՐՋԿՈՄԻ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻՑ[21]

...Լենինյան հանքերում

1. Դեկտեմբերի 2-ից մասսայականացվում է գրոհի միամսյակը բոլոր բջիջներում։
2. Կոմսոմոլից հինգ հոգի ուղարկվել են հանքերում մշտական աշխատելու համար։
3. Կոմսոմոլի № 47 սկվաժինան ընդունել է 5 մետր հանդիպական պլան. պլանի կատարումը տա 20-ը հաջող է։
4. Կոմսոմոլի № 19 բրիգադը խոսք է տվել պլանը կատարելու 120 տոկոսով, որը արդեն կատարվում է։
5. Ամսի 18-ին հանքերում ունեցել ենք շաբաթօրյակ 50 կոմսոմոլի մասնակցությամբ։
6. Ամսի 24-ին ունեցել ենք ընդհանուր շաբաթօրյակ 60 կոմսոմոլի մասնկցությամբ։
9. Շահալի-էլյարի հանքերից հանքաքարը ձուլարան տեղափոխելու համար գյուղերից մոբիլիզացիայի ենթարկվեց 33 սայլ։
10. Մաննեսում կազմակերպված են շաբաթօրյակներ, կոլչեդան բեռնելու վագոններ։ Բեռնված և ուղարկված է Բաքու 20 վագոն։

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 48, գ. 494, թ. 41։

Փաստաթուղթ

№ 12

### ՂԱՓԱՆԻ ԼԿԵՄ ՇՐՋԿՈՄԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ 1932 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1933 Թ. հունվար)

1932 թ. պղնձի պլանների կատարումն ունի հետևյալ պատկերը՝ շահագործման տրված է 3520 տոննա, փաստորեն կատարված է 4006 տոննա, պլանի 113,8%-ը։ Նախապատրաստական՝ պլանով տրված է 240 խ. մետր, կատարված է 163,75 խ. մետր, պլանի 68,2%-ը, հետախուզական պլանով տրված է 890 մետր, փաստորեն կատարված է 843,41 պ. մետր, պլանի 94,4%-ը, կապիտալնի՝ պլանով տրված է 1320 խ. մետր, փաստորեն կատարված է 948,32 խ. մետր, պլանը կատարված է 71,8%-ով, Ալմազի բուրենիե տրված է պլանով 450 մետր, կատարված է 187,6 մետր, պլանի 41,7%-ը։

2-րդ կվարտալը.— շահագործման՝ 3420 տոննա, փաստացի կատարված է 3341 տոննա, պլանի 99,7%-ը նախապատրաստական տրված է 193 խ. մետր, փաստորեն կատարված է 145,65 խ. մետր, պլանի 75,5, հետախուզական տրված է 940 պ. մետր, փաստորեն կատարված է 714 մետր, պլանի 73,7%-ը, կապիտալնի տրված է պլանով 1080 մետր, փաստորեն կատարված է 974 մետր, պլանի 89,9%-ը, Ալմազնի բուրենիե պլանով տրված է 750 մետր, կատարված է 275,8 մետր, պլանի 36,8%-ը։

3-րդ կվարտալը.— շահագործման տրված է պլան՝ 3530 տոննա, փաստորեն կատարված է 2546 տոննա, պլանի 72,1%-ը, նախապատրաստական պլանով տրված է 631 խ.մետր, կատարված է 363 խ. մետր, պլանի 58,3%-ը հետախուզական պլանով տրված է 1080 պ. մետր, կատարված է 757 մետր, պլանի 70,1%-ը կապիտալնի՝ պլանով տրված է 1078 մետր, կատարված է 793 մետր, պլանի 73,6%-ը։

4-րդ կվարտալը.— պլանով տրված է 3686 տոննա, կատարված է 3625 տ. պլանի 99,7%-ը։ Ամբողջ տարին սովորական հանքաքար տրված է հիմնական պլանով 63700 տոննա, հանդիպականի հետ 72000 տոննա, փաստորեն կատարված է 79050 տոննա, հիմնականի պլանը կազմում է 124,1%-ը, հանդիպականը 109,8%-ը։ Ամբողջ տարում հանքաքար տրված է 16000

---

[21] Կրճատված են այն փաստերը, որոնք արդեն բերված են № 10 փաստաթղթում։

տոննա, կատարված է 16950 տոննա, որը կազմում է հիմնական պլանի 119,7%-ը, իսկ հանդիպականներ 10,07%-ը, 1931 թ. համեմատությամբ կազմում է 121,77%, ամբողջ տարին սև պղինձ տրված է հիմնական պլանով 1300 տոննա, հանդիպականներ հետ 1500 տոննա, փաստորեն կատարված է 1187 տոննա 725 կիլոգրամ, որը կազմում է հիմնական պլանի 92,36, հանդիպականներ պլանի 79,3%-ը [19]31 թ. համեմատությամբ կազմում է է 101,3%-ը։

1932 թ. 3-րդ կվարտալի խայտառակ ճեղքվածքները վերացնելու համար ռայոնական կոմիտեն ձեռք է առել մի շարք միջոցառումներ. 4-րդ կվարտալը հայտարարված է արտ[ադրական] պլանների կատարման հարվածային եռամսյակ և այդ աշխատանքները ղեկավարելու համար ռայոնական կոմիտեին կից կազմակերպված է հատուկ Շտաբ, որն ամբողջությամբ զբաղվում է պլանների կատարման գործով։ 4-րդ եռամսյակում. արտադրություն է ուղարկված մշտական աշխատելու համար 80 մարդ, շաբաթօրյակների և բուքսիրային կարգով Լեն[ինյան]-հանքերին տրված է 4500 բանվորական ուժ։ Մշտական ամեն օր, քաղաքի ու գյուղական բջիջներից, օրական 30 հոգի շաբաթօրյակների և բուքսիրային կարգով աշխատում են հանքերում։

Դեկտեմբեր ամիսը յինելով գրոհի ամիս Ռայոնական Կոմիտեի անմիջական ղեկավարությամբ կազմակերպված է 30 հոգուց բաղկացած բուքսիր ուղարկված Լեն[ինյան]-հանքեր, հետ մնացած հանքերին բուքսիրի վերցնելու համար. որոնք աշխատում են հարվածային և ռազմական դիսցիպլինայի տակ։

Լեն[ինյան]-հանքերի կոմերիտական կազմակերպությունը չտեսնված աշխատանք է կատարել պղնձաքարի հանման գործում։ Դեկտեմբերի 25-ին կոմսոմոլի 6-րդ հանքը իր հնգամյա պլանը կատարել է 100%-ով, իսկ դեկտեմբեր ամսում, որը պետք է տար 900 տոննա պղնձաքար առ 27-ը տվել է 1138 տոննա։

1932 թ. Լեն[ինյան] հանքերին, գործարանին, Շահումյանի և կապիտալնի շտոլնային տրված է մշտական բանվորներ կոմսոմոլի կազմակերպության միջոցով 250 հոգի, բուքսիրների և շաբաթօրյակների կարգով տրված է արտադրության 28 հազար բանվորական ուժ, բացի պղնձարդյունաբերության [պլանների] կատարման ոգնությունից], Ղափանի կոմսոմոլի կազմակերպությունը մեծ աշխատանքներ է կատարել Ղափան-Մինջևան երկաթգծի կառուցման գործում. գծի կառուցման աշխատանքներին կոմսոմոլը տվել է 6000 բանվորական ուժ, երկաթգծում աշխատող [120] հոգուց բաղկացած կոմսոմոլի բջիջը հերոսաբար աշխատել է գծի կառուցման աշխատանքներում, որի համար գծի բացման օրն երկաթգծի կոմսոմոլի կազմակերպությունը պարգևատրվեց Կենտգործկոմի կողմից աշխատանքի հերոսի շրանշանով[22]։

## ՍՈՑ. ՄՐՑՄԱՆ ԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ղափանի կոմսոմոլի կազմակերպությունն ինչպես պլանների կատարման գործում, նույնպես և սոցմրցման ու հարվածայնության աշխատանքներում ունի բավական խոշոր նվաճումներ. 1931 թ. առաջին կվարտալում կոմսոմոլը մասնակցում էր սոցմրցմանը 53%-ով, 2-րդ կվարտալում՝ 67%-ով, 3-րդ կվարտալում՝ 81%-ով, 4-րդ կվարտալում 94%-ով, 1932 թ. գործարանի, Լեն[ինյան] հանքերի, Շահումյանի կազմակերպությունը ընդգրկված են սոցմրցման ու հարվածայնության մեջ հետևյալ կերպ՝ առաջին կվարտալում Լեն[ինյան]-հանքեր.— 114 կոմերիտականներ. մասնակցում էին 107 հոգի, որը կազմում է 94%-ը, 2-րդ կվարտալում՝ 115 կոմերիտականներից մասնակցում էին 195 հոգի, 91%,ը, 3-րդ կվարտալում.— 90 կոմերիտականներից մասնակցում էին 85 հոգի, 90%-ը, 4-րդ կվարտալում — 277 կոմերիտականներ, որոնք ամբողջությամբ մասնակցում էին սոցմրցման ու հարվածայնությանը։ Ամբողջ արտադրական բջիջները [19]32 թ. 4-րդ կվարտալում 100%-ով ընդգրկված են սոցմրցման ու հարվածայնության մեջ, իսկ գյուղական կոլխոզային կոմերիտական բջիջները 83%-ով. Սոցմրցման ու հարվածայնության որակական ցուցանիշների համար մի քանի անգամ կազմակերպված են հատուկ բրիգադներ և ստուգված պայմանագրերը [այն] ամբողջությամբ, իրագործման նպատակով։

1932 թ. սեպտեմբերին հրավիրել ենք շրջանային կոմերիտական և արհ. միութենական երիտասարդ հարվածայինների առաջին կոնֆերանս, որտեղ քննել ենք պղնձարդյունաբերության

---

[22] Կոմերիտական կազմակերպությունը պարգևատրվեց Հայաստանի բարձրագույն պարգևով՝ «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով։

պլանների կատարումը և կոմերիտմիության մասնակցությունը պլանների կատարման գործում։ Կոնֆերանսին մասնակցում էին 150 հարվածային կոմերիտական և անկուս. երիտասարդներ։ Նույն կոնֆերանսում պարգևատրվել են իրենց լավագույն աշխատանքների համար 70 հարվածայիններ հատուկ վկայականներով. կրծքանշաններով ու տոմսերով. արդ[յունաբերական] ապրանքներով։

Հարվածայինների երկրորդ կոնֆերանսը հրավիրել ենք դեկտեմբերի 27-ին [19]32 թ., որտեղ մասնակցում էին արտադրական ու կոլխոզային բջիջների լավագույն հարվածային կոմերիտական ու անկուս. երիտասարդներ 200 հոգով։ Կոնֆերանսին մասնակցում էին շրջանի բոլոր պատասխանատու աշխատողները և նրանք ամենայն սիրով ընդգծում էին կոմերիտական կազմակերպության հերոսական աշխատանքներն առաջին հնգամյակի, հատկապես [19]32 թ. պլանների կատարման գործում։

Կոնֆերանսը քննեց առաջին հնգամյակի պլանների կատարման արդյունքները կոմբինատում և 2-րդ հնգամյակի խնդիրները. կոմսոմոլի մասնակցությունը պղնձի ֆրոնտում։

Կոնֆերանսի 2-րդ օրակարգում քննվեց 2-րդ հնգամյակի առաջին գարնանացանի նախապատրաստումը և գյուղական բջիջների մասնակցությունն ու անելիքները գարնանացանի ֆրոնտում։ Կոնֆերանսում մասնակցող 200 լավագույն հարվածայիններից 150 հոգի պարգևատրվել են։ Նույն կոնֆերանսում կոմսոմոլի ռայոնական կոմիտեն պարգևատրվեց Գործկոմի կողմից մեկ փոխանցիկ դրոշակով, Կոմբինատի կողմից ստացավ գրավոր շնորհակալություն, մեկ հատ դրոշակ, 1000 ռուբլի փող, հարվածայինների 50 հատ տոմս, կրծքանշաններ 500 ռուբլու գրականություն, երկու հատ պատեֆոն։

Կոնֆերանսը նախաձեռնեց երկրորդ հնգամյակի սոց. կոնտրակտացիա, նույն կոնֆերանսում 40 կոմերիտականներ իրենց ամրացրին հանքերին՝ մինչև երկրորդ հնգամյակի վերջը։ Նկատի ունենալով Լենինյան հանքերի, գործարանի, Շահումյանի կոմերիտական կազմակերպությունների հերոսական աշխատանքները առաջին հնգամյակի պլանների կատարման գործում, Լենինյան հանքերի կոմսոմոլի անվան 6-րդ հանքի հերոսական աշխատանքները, որը առաջին հնգամյակի պլանը կատարել է դեկտեմբերի 25-ին, իսկ դեկտեմբեր ամսվա պլանը կատարել է 139 տոկոսով, որ 1932 թ. բուքսիրների և շաբաթօրյակների կարգով ռայոնական կոմիտեն Լենինյան հանքերին է տվել 28 հազար բանվորական ուժ, հունվարի 1-ին հրավիրված Լենինյան հանքերի, Շահումյանի բանվորական հարվածայինների կոնֆերանսները պահանջեցին Լենինյան հանքերի կոմերիտական կազմակերպությանը պարգևատրել աշխատանքի հերոսի շքանշանով։

## ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ 6 ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Կոմսոմոլի կազմակերպությունը պլանների կատարման գործում ընկ. Ստալինի 6 պատմական ցուցմունքների իրագործման հիման վրա կատարել է հսկայական աշխատանքներ։ Այսօր Լենինյան հանքերում աշխատում են 80 տնտեսական հաշվարկային բրիգադներ, որից 11 կազմակերպված են կոմսոմոլի անմիջական նախաձեռնությամբ, այսպես օրինակ՝ կոմսոմոլի տնտ. հաշվարկային բրիգադները տալիս են հետևյալ արդյունքը՝ Լենինյան հանքերի № 5-րդ հանքի 21-րդ կոմսոմոլի բրիգադն, որը կազմակերպված է ՄՅՈՒԴ-ի 18-րդ տարեդարձի առթիվ, ունի իր լավագույն աշխատանքի ցուցանիշները։ Բրիգադը բաղկացած է 7 հոգուց. բրիգադիր Արշակ Սիմոնյան, 1932 թ. նոյեմբեր ամսում բրիգադին պլան էր տրված 35 խ. մետր, կատարել են 46 խ. մետր, պլանի 154 տոկոսը, արտադրողականությունը, բարձրացել է 4,8 տոկոսով, խնայողություն են արել 11 կիլոգրամ պայթուցիկ նյութ (դինամիտ)։

Լենինյան հանքերի կոմսոմոլի անվան 6-րդ հանքի 41-րդ արտելը 1932 թ. առաջին կվարտալում պլանը կատարել է 115 տոկոսով, 2-րդ կվարտալում՝ 125 տոկոսով, 3-րդ կվարտալում 125 տոկոսով, իսկ 4-րդ կվարտալում՝ 154 տոկոսով։

Լենինյան հանքերի սարտիրովկայում աշխատող կոմերիտական արտելը, ղեկավար կոմերիտական աղջիկ Մաքաղաթ Բաղդասարյան, 1932 թ. առաջին կվարտալում պլանը կատարել է 152%-ով, 2-րդ կվարտալում՝ 153 %-ով, 3-րդ կվարտալում 154%-ով, 4-րդ կվարտալում՝ 142%-ով։

Էլեկտրացեխում կազմակերպված Հայաստանի խորհրդայնացման 11-րդ տարեդարձի անվան սմենան 6 ամսվա ընթացքում խնայողություն է արել 60 կիլո յուղ (մազութ), 8 կիլոպակլի։

Տնտ. հաշվարկային բրիգադների լավագույն օրինակներ կան նաև ձուլարանում, մեխանիկական, դիզելային ցեխերում, Շահումյանի անվան հանքում և այլուր։

Լենինյան հանքերում, գործարանում կազմակերպված են տեխնիկայի տիրապետման 8 խմբակներ, որտեղ ընդգրկված են 160 կոմերիտականներ. տեխնիկայի տիրապետման խմբակները աշխատում են կանոնավոր չափով, որովհետև խմբակի ղեկավարները կոմերիտական տեխնիկներ են, այսպես օրինակ, գործարանի էլեկտրացեխում կազմակերպված տեխնիկային տիրապետման խմբակը, որն ամսական ունենում է 72 ժամ պարապմունք, խմբակի մեջ ընդգրկված 24 բանվորներից 9 հոգին անկուսակցական և սեռագործ բանվորներ են, որոնք 1933 թ. հունվարին իրենց որակը բարձրացնելու համար առաջ են բաշվում ցեխի գծով որպես մանտյորներ, վարպետներ և այլն։

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրապես Ղափանի շրջանում երիտասարդության կուլտ. կենցաղային դրությունը դրված է բավարար հիմքերի վրա, այդ առթիվ հրավիրված են համապատասխան մարմինների հետ խորհրդակցություններ, որտեղ քննվել են օրինակելի կոմերիտական հարվածայինների համար հանրակացարաններ կառուցելու խնդիրները, երիտասարդության մեջ մասսայական աշխատանքներ կազմակերպելու գործը և այլն։ Լավագույն բանվոր հարվածայինների համար Լենինյան հանքերում և գործարանում կառուցված են երիտասարդական հարվածայինների հատուկ հանրակացարաններ, որտեղ սանիտարական դրությունը, կուլտուրական աշխատանքները տարվում են օրինակելի կերպով։

Օրինակելի հանրակացարաններ կառուցված են նաև Շահումյանում, ֆլոտացիոն գործարանում և կապիտալնի շտոլնիայում։ Չնայած այս ուղղությամբ տարված է բավական խոշոր աշխատանք, այնուամենայնիվ երիտասարդության կուլտ. կենցաղային աշխատանքները կազմակերպված չեն այնպես, ինչպես հարկն է, օրինակ երիտասարդության հանգստի ժամերը չեն օգտագործվում իրենց նպատակին, հարվածայինների հանրակացարաններում հաճախ չեն կազմակերպվում զրույցներ, հարց ու պատասխանի երեկոներ և այլն։

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Բանվոր երիտասարդության բժշկական քննության գործը սկսված է նոյեմբերի 5-ից և վերջանալու է հունվարի 5-ին, այդ առթիվ Առ[ողջապահության] ժողկոմատի և Կենտրոնական Կոմիտեի որոշումները ամբողջությամբ մասսայականացված են։ Առ 1-ն հունվարի բժշկական քննության ենթակա 370 բանվոր երիտասարդներից քննված են 207 հոգի, նախնական տվյալներից պարզվում է, որ կոմբինատի մի շարք ցեխերում աշխատող բանվոր երիտասարդներից շատերը ունենստի թեթև հիվանդություններ, որոնց բարտերը Աշխ[ատանքային] ժողկոմատի կողմից հաստատվելուց հետո կփոխվի նրանց աշխատանքի բնույթը. միաժամանակ նախապատրաստվում են այդպիսիներին 1933 թ. ընթացքում ուղարկել համապատասխան հանգստյան տներ, սանատորիաներ, կուրորտներ և այլն։

Այս առթիվ Կենտրոնական Կոմիտե կուղարկվի մանրամասն ինֆորմացիա բժշկական քննությունը վերջանալուց հետո։

ՄԼԻ Հայկական ֆիլիալի պարտուրոիվ։
ֆոնդ 48, գործ 494, թ 66—70։

*Փաստաթուղթ*
*№ 13*

## ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ 1933 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 9-ի «1932 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԳՐՈՀԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄԻՑ

... 2. Նշել, որ գրոհը ամենից ցայտուն կերպով արտահայտություն գտավ Լենտեքստիլի մանվածքային, հին գործվածքային և տրիկոտաժ գործարաններում և Ղափանի ու Ալավերդու պղնձահանքերում։

Ուժերի կատարած լավագույն մոբիլիզացիայի և դեկտեմբերյան գրոհին ու [19]32 թ. տարեկան պլանների կատարմանը ակտիվ կերպով օժանդակելու համար։

ա) Գովասանական թերթ տալ Ղափանի և Ալավերդու արտադրական կոմսոմոլին, Լենտեքստիլի տրիկոտաժի և մանարանի կոմսոմոլին ու Լենինականի Դեպոյի № 6343 կոմերիտական շոգեքարշի բրիգադին։

Մլի Հայկական ֆիլիալի պարտարխիվ.
ֆ. 48, գ. 432, թ. 28։

*Փաստաթուղթ*
*№ 14*

## ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՈՂՋՈՒՅՆԸ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԵՎ ՂԱՓԱՆԻ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ ԱՎԱՐՏԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ալավերդի՝ ԼԿԵՄ շրջկոմ բնկ. ՄԵԼԻՔՅԱՆԻՆ.
Ղափան՝ ԼԿԵՄ շրջկոմ բնկ. ՍԵՐՈԲՅԱՆԻՆ.

ՀԼԿԵՄ Կենտրոնական Կոմիտեն գերմագին ողջունում է Ալավերդու և Ղափանի պղնձի ճակատում հերոսաբար մարտնչող կոմերիտական ջոկատներին, որոնք բոլշևիկյան հաղթանակներ տարան առաջին 5-ամյակի ավարտական տարվա պղնձի պլանների կատարման գործում։

Համառորեն ու անդադրում պատոելով ամրակուռ ժայռերի կուրծքը 1-ին հնգամյակի ընթացքում, դուք տվիք ինդուստրացող սոցիալիստական հայրենիքին 15000—իսկ միայն [19]32 թ. մոտ 4000 տոննա պղինձ[23], Ալավերդու, Շամլուղի և Ղափանի հանքերի ու ձուլարանների կոմերիտական բրիգադները ցույց տվին բոլշևիկյան տեմպեր և հարվածայնության փայլուն օրինակներ։ Հնգամյակի դեկտեմբերյան ավարտական՝ գրոհը Ձեզ մոտ վերածվեց իրական բոլշևիկյան արշավի՝ պլանների կատարման գործում, որը և տվեց խոշոր հաջողություններ։

Շարունակեցեք կոմերիտական պայքարը պլանների համար։ 2-րդ հնգամյակում երկիրն ավելի շատ պղինձ է պահանջում։ Սոցիալիստական հանդիպակաղով տվեք այդ պղինձը։ Ավելի բարձր հարվածայնության տեմպը։ Ստալինյան ցուցմունքների արմատական կենսագործում պղնձի ճակատի բոլոր օղակներում, աշխատանքի բոլոր բնագավառներում, 2-րդ հնգամյակի առաջին իսկ ամսում վերացնել պլանների մասնակի ճեղքը Ալավերդում և Ղափանում։ Առաջ մղել հեռախուզությունը։ Ժամանակից շուտ գործարկել նորակառույց ֆլոտացիոն գործարանն ու արտացոլիչները։ Պղնձի ֆրոնտն ամրացնել կոմերիտական կայուն մարտիկներով։ [19]33 թ. իսպառ ոչնչացնել ճեղքվածքը բառը պղնձի համար տարվող կոմերիտական, հերոսական պայքարի լեռներից։

Կենտրոնական Կոմիտեն հաստատ համոզված է, որ Ալավերդու և Ղափանի կոմերիտական կազմակերպությունները 2-րդ հնգամյակում և հատկապես նրա առաջին տարում—[19]33 թ. պղնձի պլանների քանակական և որակական ցուցանիշների գերակատարումով մի ավելորդ անգամ ևս կապացուցեն Լենինի կուսակցության հավատարիմ օգնականի իրենց պատվավոր կոչումը։

Լենինի գրոշի տակ և նրա կուսակցության ղեկավարությամբ հառաջ դեպի 2-րդ հնգամյակի հաղթանակները։

Ողջույն Ալավերդու և Ղափանի երիտասարդ բոլշևիկներին, պղնձի ֆրոնտի հերոսական կոմսոմոլին և սոցիալիստական աշխատանքի բոլոր առաջավոր մարտիկներին, բոլոր հարվածայիններին։

Մլի Հայկական ֆիլիալի պարտարխիվ.
ֆոնդ 48, գործ 492, թ. 143։

---

[23] Տրվեց 3832 տոննա մաքուր պղինձ։